ՆՈՐ-ԴԱՐ

№ 62 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի, 2 Ապրիլի **1903** Չորեքշաբթի, 2 Ապրիլի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 62

Տարեկան 10 ռուբ., վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.: Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Թարգմանական գրականութիւն:
Քրոնիկոն—Լուրեր
Մեզ գրում են. —Շուշուց: Վաղարշապատից:
Պրոֆեսոր Եղիազարեանի յօդուածի առթիւ
Մամուլի շուրջը:
Թղթակցութիւններ.—Նամակ Ֆրանսիայից-Պարիզ. Նամակ Գերմանիայից Բեռլին:
Քաղաքական.—Թիւրքիա: Բալկանեան անէրութիւններ: Սերբիա:
«Նոր-Դար»-ի հեռագրներ
Թէր և դէմ:
Բանասիրական.—Հնից-Նորից:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 1 ապրիլի 1903 թ.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մի հարևանցի ակնարկ ամբողջ տարուայ, կամ ժամանակի մի որոշ շրջանի հայ գրականութեան մէջ լոյս տեսնող հայ լեզուով հրատարակութիւնների վրայ, գրականութեամբ հետաքրքրուող ամեն մի հայի հասցնում է այն եզրակացութեան, որ մեր ընթերցասիրութեան գործը շատ թոյլ է, և թէ ընթերցանութիւնն այնպիսի ստիպողական պահանջ չէ դարձել մեր ժողովրդի համար ինչպիսին մենք տեսնում ենք օտար, մանաւանդ եւրոպական հասարակութիւնների մէջ: Սակայն, այս անգամ մեր նպատակից դուրս լինելով խօսել ընթերցասիրութեան մեր մէջ տարածուած չլինելու տխուր իրականութեան վրայ, կամենում ենք կանգ առնել այդ խնդրի հետ անմիջական կապակցութիւն ունեցող մի ուրիշ հարցի վրայ, որ ահագին կարևորութիւն ունի նոյն իսկ բուն շարիքը դարմանելու տեսակէտից:

Որևիցէ ազգի գրականութիւնը պահող ու նրան կենդանութիւն տուող սնունդը բխում է երկու էական աղբիւրներից—զանազան ճիւղերի վերաբերուած ինքնուրոյն հեղինակութիւններ և թարգմանական աշխատութիւններ:

Որքան էլ մի գրականութիւն հարուստ լինի իւր ազգային հեղինակութիւններով, այնուամենայնիւ, այդ ազգի գրականութեան մէջ ահագին տեղ են բռնում օտար լեզուներից կատարուած թարգմանութիւնները, և որքան մի գրականութիւն հարուստ է ինքնուրոյն գրուածներով, այնքան աւելի մեծ կարևորութիւն է տրւում օտար գրականութիւնների մէջ լոյս տեսնող նշանաւոր գրուածների մայրենի լեզուին վերածելու գործին:

Գերմանական, ֆրանսիական գրականութիւնների մէջ, որոնք քաղաքակիրթ ազգերի շարքում առաջին տեղն են գրաւում, զուգընթաց կերպով ընթանում են օտար ազգի գրուածների թարգմանութիւնները, և դժուար կարելի է գտնել անգլիական, ամերիկական և կամ նոյնիսկ ռուսական քիչ շատ աչքի ընկնող, գրականութեան այս կամ այն ճիւղին պատկանող մի հեղինակ, որ թարգմանուած և ծանօթ չլինի ֆրանսիացի ու գերմանացի ընթերցող հասարակութիւններին:

Եթէ այդպէս են վարւում գրականութեամբ ու գրականութեամբ մեզանից շատ բարձր կանգնած ազգերը, եթէ իրաւացի կերպով այդքան մեծ կարևորութիւն է տրւում թարգմանական գրականութեան, ինչո՞ւ միևնոյնը ճշմարիտ ու օգտակար չպէտք է համարել նաև հայ գրականութեան նկատմամբ, որը, շատ սահմանափակ սնունդ ստանալով ինքնուրոյն ու սեփական աղբիւրակից, ահագին պէտք ու պահանջ ունի օտար աղբիւրներին դիմելու, իւր խոշոր պակասները օտար գրականութիւններից լրացնելու նկատմամբ:

Մի կողմից ազգային գրականութեան զարգանալու և ճոխանալու հնարաւորութիւն տալու և միւս կողմից հայ ընթերցող հասարակութեան զարգացման մակերևոյթն իւր որոշ բարձրութեան վրայ, պահպանելու ինչպէս ֆրանսիացին է ասում au courant պահպանելու պահանջներն անվիճելի պարտք են դնում հայ տպագրական խօսքի ղեկավարների վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել թարգմանական գրականութեան վրայ և տալ նրան առաւել ընդարձակ տեղ, քան ներկայումս ունի նա:

Թիւրիմացութեան տեղիք չըտուած լինելու համար, աշխատենք աւելի ևս պարզել մեր վերջին խօսքերի իմաստը:

Թարգմանական գրականութեան ոյժ տալ ասելով, չենք ուզում երբէք ասած լինել, թէ ռուսական, ֆրանսիական, գերմանական և կամ ուրիշ ազգերի գրականութեան մէջ լոյս տեսնող ամեն մի հեղինակութիւն պէտք է հայերէնի վերածել անխտիր: Շատ պարզ է, որ այդ անելու համար հայ մամուլն ոչ պէտք ունի և ոչ էլ հնարաւորութիւն: Մեր խօսքն վերաբերում է այն ամենաընտիր ու զարգացուցիչ գրուածներին, որոնք ամեն օր տասնեակներով լոյս են տեսնում օտար գրականութիւնների մէջ և որոնց մասին, ցաւելով պէտք ասել, գաղափար անգամ չունի օտար լեզուների անծանօթ հայ ընթերցողը: Այդ տեսակ գրուածներն են, որ պէտք է կարողանան սնունդ տալ մեր աղքատ գրականութեան և նորանոր թարմ երակներ մտցնելով նրա մէջ, նրան ապատեն լճանալուց ու անօգտակար դառնալուց:

Ոչ միայն այդքան, հապա հայ ընթերցասիրութեան բարոյական ու նիւթական զարգացման ամենանաձուկ սահմանները ստիպում են մեզ աւելի զգուշաւոր ու աւելի գործնական լինել:

Անհնարին է նոյն իսկ օտար գրականութեան մէջ լոյս տեսնող ամեն մի կարևորի, հայերէնի վերածել առանց յապաւումների ու համառօտութիւնների: Որքան էլ ցանկալի չլինի դա, որքան էլ անխաբեկի համարուի—այնուամենայնիւ պարտաւորուած ենք անհրաժեշտօրէն այդ ընթացքը բռնել, եթէ չենք ցանկանում մայրենի գրականութիւնը զրկել հարստանալու ու զարգանալու հնարաւորութիւնից: Թողնելով մի կողմ այդ միջոցի գործադրութեան մի շարք դժուարութիւնները, որոնք աննկուն աշխատութեան առաջ միշտ կարող են բարձուել, լուրջ դժուարութիւն և անպատեհութիւն կարող է միայն առաջ բերել նիւթի համառօտումը: Ընդունելով հանդերձ այդ դժուարութեան հնարաւորութիւն, այնուամենայնիւ, չենք կարող համաձայնել, որ այդ ևս կարելի չլինի վերացնել, մանաւանդ երբ գործի գլուխ կանգնի կարող և ձեռնհասութեան պահանջներին համապատասխան այս կամ այն անձը: Իսկ թէ ինչպէս—այդ մասին յաջորդ անգամ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Վեհ. Հայրապետը նշանակել է եօթն հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որը Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան հետ միասին պիտի որոշէ յիշեալ պալոցի նոր շինութեան տեղն ու ծրագիրը և պիտի հոգայ հարկաւոր ծախքերը: Յանձնաժողովի նախագահ է կարգուած Թեմիս սրբազան առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը:

— Թիֆլիսի նորընտիր քաղաքագլուխ իշխ. Ն. Վ. Երկոյնարագուկ-Արգութեանը ապրիլի 1-ից ստանձնեց իւր պաշտօնը:

— Ապրիլի 18-ից անդրկովկասեան երկաթուղիների վրայ մացւում է գնացք-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՆԻՑ-ՆՈՐԻՑ

Արևելեան Ասիայի ժողովուրդների ուսուցիչը.—Դրականութեան հսկայական զարգացումը.—Հիւանդանոց անտառի մէջ.—Անթել հեռագիրը:

Զարմանալի և օրինակելի է այն յառաջադիմութիւնը, որ ճապոնիան արել է վերջին 50—60 տարուայ ընթացքում: Նա ստեղծել է իւր ազգային կուլտուրան, ունի զինուորական ժամանակակից պահանջներին համապատասխան կազմ, ծովային ոյժ և մեծ տէրութիւնների շարքում գրաւել է բաւական կարևոր տեղ: Այդ բոլորն ընդամենը որևիցէ յիսուն տարուայ ընթացքում:

«Review of Reviews» թերթը, խօսելով ճապոնիայի ունեցած այդ աչքի ընկնող յառաջադիմութեան մասին, նրան անւանում է «Ասիայի ուսուցիչ» ուրիշ խօսքով, ճապոնիան կարևոր դեր ունի կատարելիք ասիական ազգերի ինքնաճանաչութեան բերելու գործում: Նա կկարողանայ վերջապէս թէ Չինաստանին և թէ Քորէային դնել քաղաքակրթութեան ճանապարհի վրայ, նոյն իսկ օգնել այդ միևնոյն բանի մէջ և' Սիամին:

Ճապոնական զինուորականները, վաճառականները, մանր առևտրականները՝ առհասարակ կրթութեան տէր մարդիկ, մասնաւոր ընդունակութիւն ունեն իրենց ցեղակից ասիացիների վրայ աւելի շուտով ազդելու և իրենց ներթարկելու, քան ուրիշ ազգութիւնները: Եւ այդ շատ հասկանալի է: Ճապոն ժողովուրդի և արևելեան միւս ասիացիների միջև որոշ չափով ցեղակցական համակրութիւն կայ: Ճապոնական, չինական և քորէական լեզուների դարձուածների մէջ կայ որոշ չափով նոյնութիւն, և այդ ազգերի մօտաւորութեան ու միմեանց վերաբերմամբ ունեցած համակրութեան հէնց գլխաւոր պատճառներից մինն էլ այդ է, որը, անշուշտ, չկայ եւրոպական ազգերի մէջ: Բացի այդ արմատական պատճառից, ճապոնացիների իրենց շուրջը գտնուած այդ ազգերի միջև գտած յաջողութեան գաղտնիքը գըտնըւում է նաև այն բանի մէջ, որ եւրոպացիներն ասիացի ժողովուրդների համար ցանկանում են ամեն բան, անել, սակայն պայմանով, որ այդ արածը մենավաճառութիւն դառնայ իրենց համար, մինչդեռ ճապոնացիներն իրենց դրացիներին սովորեցնում են, որ նրանք ամեն բան իրենց համար իրենք անեն, ինչպէս վարուել են ճապոնացիներն իրենց վերաբերութեամբ:

Երկար փորձերից յետոյ, չինացիները եկել են այն համոզման, որ ճապոնացի զինուորականներն ու կրթիչները շատ աւելի օգուտ են տալիս իրենց, քան եւրոպացիները: Ճապոնացի վաճառականները հաստատւում են Չինաստանի այնպիսի խուլ անկիւններում, ուր ոչ մի եւրոպացի համարձակութիւն չի ունենալ գնալ: Ճապոնացիներն իրենց դրացի եղող բոլոր երկրներում գաղթականութիւններ ունեն հաստատած, և Մանջուրիայում, որ պատկանում է Ռուսիայի հսկողութեան տակ, աւելի շատ ճապոնացի կայ, քան ռուս: Նրանք մեծ թիւ են կազմում նմանապէս և Քորէայում: Նրանք տարածուած են երկրի բոլոր մասերում. այն տեղերը, ուր ճապոնացի կայ նմանապէս և քորէական քաղաքների ճապոնական թաղերը շատ լաւ են կառավարւում և ժողովուրդը օր ըստ օրէ աճում և յառաջադիմում է:

Այս բոլոր առածներից կարելի է հետևեցնել, որ ճապոնացիները շնորհիւ իրենց՝ եւրոպացիների վրայ ունեցած առաւելութիւնների, և բազմաթիւ գաղթականութիւնների, խաղաղ կերպով հետզհետէ տիրապետում են Քորէային:

Վերջին տասն տարուայ ընթացքում ճապոնիայի առևտրական նաւատորմիղը հսկայական մեծութեան է հասել: Ասիական ամեն մի ծովում, գետի վրայ կարելի է պատահել ճապոնական նաւերի, որոնք ճանապարհորդում են նըմանապէս և դէպի Ամերիկա, Եւրոպա, Աւստրալիա, ևայլն: Այդ նաւերի ճանապարհորդների թիւն ու տեղափոխութեան ծախսերն օրըստօրէ աւելանում են, և այդ բանի մէջ ևս ճապոնացիներն իրենց անձնական օրինակով սովորեցնում են դրացի ազգութիւններին, թէ մի ժողովուրդ իւր սեփական ջանքերով ինչպիսի խոշոր արդիւնքներ կարող է ձեռք բերել:

—

Թէ քաղաքակիրթ ժողովուրդների մէջ որքան տարածուած են գրականութեան սէրն և ընթերցանութիւնը, ինչպիսի կենսական պահանջ է դարձել այդ բանը նրանց համար, երևում է ֆրանսիական «Revue des Revues» ամսագրի հաւաքած հետևեալ վիճակագրական տեղեկութիւններից: Գերմանիայում ամեն տարի հրատարակւում է 25,000 նոր գիրք, Ֆրանսիայում—13,000, Իտալիայում—10,000 և Անգլիայում—7000: Իսկ ամբողջ աշխարհի վրայ ներկայումս եղած գրքերի թիւը հասնում է մօտաւորապէս երեք միլիարդի, որոնք բաժանուած են հետևեալ կերպով. դրանցից Միացեալ-Նահանգներում կայ 700,000,000, Արևմտեան Եւրոպայում—1,800,000, Արևելեան Եւրոպայում—460,000,000 և աշխարհի միւս մասերում—240,000,000.

Գալով լրագրութեան,—այդ ամենից աւելի զարգացած է Ամերիկայում. միմիայն Նիւ-Եօրքում հաշւում են 80 լրագիր, զանազան լեզուներով: Ամենից աւելի ուշադրութեան առնուելիք կէտն այն է, որ Միացեալ Նահանգներում հրատարակւող օտար լեզուներով թերթերը միանգամայն չէզոք դիրք են բռնում Նահանգների կառավարութեան վերաբերմամբ: Այդ բանը շատ պարզ կերպով երևաց սպանիական-ամերիկեան պատերազմի ժամանակ: Ամերիկայ հրատարակւող ոչ մի սպանիական թերթ թոյլ չտուեց իրեն թշնամաբար վերաբերուելու դէպի տիրող կառավարութիւնը, առհասարակ դէպի ամերիկացիները:

—

Գործարաններում աշխատող բանւորների ապահովագրութեան գործը տարբեր-տարբեր հիմքերի վրայ է դըրուած զանազան ազգերի մէջ: Այդ կողմից բաւական հետաքրքրական է Բեռլինի ապահովագրական մի ընկերութեան գործունէութիւնը: Այդտեղ ապահովագրական գումարի տարեկան վճարի մի մասը վճարում է գործատէրը և միւս մասը գործաւորը ինքը: Այդ ընկերութեան ամբողջ դրամագլուխը հասնում է 55½ միլիոն մարկի, իսկ տարեկան եկամուտն է մօտաւորապէս 7 միլիոն մարկ: Ընկերութեան վարչութիւնը կազմում են երկու պաշտօնեայ, երկու բանւոր և երկու գործատէր: Իր կազմակերպութեան՝ ըսկզբում ընկերութեան նպատակն է եղել ապահովագրուած բանուորներին աշխատանքի մշտապէս և կամ ժամանակաւորապէս անընդունակ դարձած դէպքում, ապրուստի միջոց տալ: Սակայն, երբ ընկերութեան միջոցներն ընդարձակուեցին, այդ նպատակը բաւական չհամարուեց. որոշուեց բանւորների համար շինել առողջապահիկ-հիւանդանոցներ (sanatoria): Փորձի համար, առաջին անգամ 1894 թ. հիմնեցին մի փոքր հիւանդանոց, սակայն, կարճ ժամանակում փորձն այնքան յաջող գնաց, որ ընկերութիւնը վճռեց իսկոյն գնել 500 մորգէն հող, Բեռլինից մի ժամուայ հեռաւորութեան վրայ, անտառի մէջ և այնտեղ շինեց ընդարձակ մի հիւանդանոց, չորս բաժանմունքից բաղկացած, կանանց և տղամարդկանց բաժանմունքները զատ-զատ, ինչպէս նաև իւրաքանչիւր հիւանդութեան համար առանձին բաժանմունք: Հիւանդանոցի վրայ, որքան երևում է նրա հաշիւներից, ծախսուած

ների երթեւեկութեան նոր ժամակարգութիւն։

— Ռուսիայի ներքին նահանգներից 40 բնտանիք այս օրերս դիմել են դէպի Լենքօրանի գաւառը, որտեղ նրանց համար բնակութեան տեղ է յատկացուած պարսից սահմանի մօտ Բեյլասուվարում։

— Մեզ խնդրում են հրատարակել, որ դերասան պ. Արմենեան տեղական գերասաններ ու դերասանուհիների մասնակցութեամբ երեքշաբթի, ապրիլի 8-ին, ներկայացնելու է Թիֆլիսի վրաց ազն. բանկի թատրոնում Էմրլ Օժիէի «Պարոն Պուարէի փեսան» 4 գործ. կոմեդիան։

— Անդադար բողոքներ ենք ստանում Թիֆլիսի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու հին քահանաներից մէկի դէմ, որի և իւր միաբանակիցների միջև ընդհարումները անպակաս են լինում և երբեմն շատ սուր բնաւորութիւն են ստանում։ Այդ քահանան է Տէր-Դաւիթ Տէրգրիգեան։ Իւր կռուարար բնաւորութեամբ այդ քահանան այն աստիճան առաջ է գնացել, որ այս օրերս իւր միաբանակից Թադէոս քահ. Տէրունադեանցին սպառնացել է հրապարակով, թէ մինչև Զատիկ սպանել կտայ նրան։ Յանձնում ենք այս գործը հոգևոր իշխանութեան ուշադրութեան։

— Թիֆլիս քաղաքի ելեկտրական լուսաւորութեան ծրագիրը, Թիֆլիսի նահանգական վարչութեան շինարարական բաժնում քննուելուց յետոյ, ուղարկուած է ներքին գործերի մինիստրութեան տնտեսական դեպարտամենտին։

— Անցած տարի Կովկասի բժշկական ընկերութիւնը որոշել էր միջնորդել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան առաջ, քաղաքային վարչութեան կից հիմնուի յատուկ մասնաժողով պառնկութեան վրայ հսկելու համար, նմանապէս և հիմնել յատուկ բուժարաններ տարափոխիկ հիւանդութիւնների համար։ Ներկայումս յիշեալ ընկերութիւնն իւր այդ որոշումը յայտնել է քաղաքային վարչութեանը, որը խնդիրը կզեկուցանէ քաղաքային խորհրդին։

— Քութայիսի գաւառական ժողովները որոշել են նահանգական աղնուականութեան մայիսին գումարուելիք ժողովում նորից յարուցանել զեմստվային հաստատութիւններ մացնելու խնդիրը։

— Ամերիկայից ճանապարհորդների մի մեծ խումբ է Բաթումի վրայով Թիֆլիս հասել և հետաքրքրութեամբ դիտում է Թիֆլիսը և նրա շրջակայքը։

Այդ տուրիստների մէջ կան և բաւականին թուով գերմանացիներ։ Ընդամենը 150 հոգի են տղամարդիկ և կիներ։ Տղամարդկանց մէջ հանդիպում ենք առաջ դէմքով, չենք չնորհքով մարդիկ, կանայք խեղճ բաներ են։ Ամեն երկրում էլ տղամարդիկ այժմ աւելի սիրուն են։ Տուրիստները Թիֆլիսից կվերադառնան Բաթում։

— Իշխան Ս. Գ. Դայստու մարտի 24 մի յայտարարութեամբ դիմել է Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան գանգատով, թէ իւր կինը ազնուհ. հեա քաղաքային մսավաճառանոցում կասիրին վճարելիս՝ վերջինս իշխանուհուն յանդուգն խօսքեր է ասել, ձեռքերը շարժել է և իբրև փողոցի կինտո փողի մանրը, ինչոր 2 կոպէկ չէ տուել, վրձել է։

Անտարակոյս, եթէ հաստատուի, որ մսավաճառանոցի կասիրը կոպտաբար վարուել է և այլն, ի հարկէ նրան պէտք է պատասխանատուութեան ենթարկել. ամեն տեղ, ուրեմն և մսավաճառանոցում ծառայողները պէտք է վերին աստիճանի քաղաքավարի լինեն և միշտ պատրաստակամութիւն ցոյց տան ամեն կերպ ծառայելու հասարակութեան, առնողներին։

Պէտք է ասել, որ մեր երկրում առեւտրի մէջ, մագազիններում, բազարներում կոպիտ վերաբերմունքը դէպի հասարակութիւնը, առնողները ընդհանուր երևոյթ է։

Ինքն ըստ ինքեան վեր յիշած իշխանի գանգատը, եթէ հաստատուի, արժանի է ամենայն ուշադրութեան։ Բայց աւելի ուշադրութեան արժանի է իշխանի քաղաքային վարչութեան անուան գրած յայտարարութիւնը իւր ձեւով և բովանդակութեան ամբողջութեամբ։

Իշխանը խնդրում է, որ քաղաքային վարչութիւնը զսպէ վայրենի ասիացու գազանային բնազդումները, այլապէս թէ ոչ «Զեր ամեռչկային այնտեղ և եթ, ձեռքի մէջ կըջարդեմ քիթ ու պռունգը», վերջացնում է իշխանը։

(Ինչպէս երևում է այդ իշխանը ամենևին մոռացել է, որ այստեղ օրէնք կայ, դատարան կայ և թէ ամենևին բանի նման չէ, թէկուզ շատ յանդուգն կասիրի համար վիրաւորել մի ամբողջ ժողովրդի ինքնասիրութիւնը։ Այնուհետև հետաքրքիր է իմանալ, թէ քաղաքային վարչութիւնը իրեն իշխանի գէմ գանգատուելո՞ւ է։

—

ՉՈՒՉՈՒՑ.—Լսում ենք, թէ վանական կալուածների պետական յետ ընկած հարկը վճարելու համար, տեղիս կոնսիստորը մի մեծ հնար է գտել. որբոց և այրեաց գանձակում 2000 բուրլի փող կայ. մեր դիպլոմատները շատ հնարաւոր և օրինական են համարել հարկի մի մասն այդ գումարով ծածկել։ Հարցնում ենք՝ ինչ իրաւունքով. միթէ որբերի և այրիների համար հանգանակուած կոպէկներն էլ պիտի ուտեն նրանք, որ «հանապազ ուտեն զտունս այրեաց»։

—Քահանայական նոր ձեռնադրութիւն կատարելու քայլը յոյժ բժիշկների դեղերից աւելի լաւ ներգործեց մեր առաջնորդի վրայ։ Պատրաստւում է վերցնել և քահանայ ձեռնադրել։ Զարմանալի բան. տարիներով բողոք ու աղաղակներ են հասնում էջմիածին և ոչ ոք ուշք դարձնող չկայ. բայց քահանայական խնդիրներն ամենայն արտգութեամբ որոշւում և գալիս են. այն էլ ինչպէս, հեռագրներով։ Մինուցի մի անգամ, որ Ղարաքաղում լուսաւորիչներ աւելացնելու բուռն ցանկութիւն ունի, հեռագրներով է աւետում տիրացուների գործի յաջող ելքը։ Երկու ու կէս տարուայ մէջ մեր առաջնորդը ձեռնադրել է 35—45 տիրացու. բոլորն էլ մի կաղապարի մարդիկ։ Իրանց մէկին, այն էլ ութ ամիս քահանայութիւն անելուց յետոյ, հէնց էջմիածին վարդապետ ասում է. «Տէր հայր, եթէ դու միայն «խոնարհեցուն» մինչև «Ալլելուն» ուղիղ կարդաս, ես քեզ կտամ 10 բուրլի աջահամբոյր։ Քահանան հրաժարւում է կարդալուց։ Ներկայ եղողները սասանուեն կզան. Ի մացէք չարանակութիւնը։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.— Արդէն եղանակները կատարեալ ամառային են։ Մի քանի տեղերում երևացել են տիփի նըշաններ. օր չի անցնում, որ 2—4 հոգի չմեռնի։

ՊՐՈՖԵՍՈՐ ԽՂԻԱԶԱՐԵԱՆԻ ՑՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹԻՒ

—

Անցած տարուայ վերջերը հրատարակեցինք պրոֆեսոր Ս. Եղիազարեանի մի ընդարձակ յօդուածը հայ-վրական յարաբերութիւնների խնդրի առթիւ։ Այդ յօդուածը թարգմանուեց վրաց «Իւերիա» լրագրում։ Ներկայումս նոյն լրագիրն իւր աշխատակից պ. Ուլեսլիի բերանով հետեւեալ պատասխանն է տալիս պրոֆ. Եղիազարեանին («Իւերիա» № 2).

—

Կարդացի պրոֆեսորի նամակը և զարմացայ, ասում է պ. Ուլեսլին։

Ամենից առաջ պրոֆեսորը համաձայն է այն կարծիքին, որ հայերը չսկսեն թափառել ուրիշ տեղեր, այլ աւելի լաւ է, որ նրանք մնան իրենց հայրենիքում և իրենց ոյժն ու կարողութիւնը ծառայեցնեն այդ հայրենիքին։ Լաւ և պատուական։ «Իւերիա»-ի միտքն էլ հօ այդ է։ Ուրեմն ինչու է յարգելի պրոֆեսորը, գժգոհ այս լրագրից։ Սրա համար կասեն մեզանում, թէ «հաւատում եմ երդմանդ, բայց գործի վերջը զարմացնում է ինձ»։

Տնտեսական տագնապները հալածում են հայերին իրենց հայրենիքից ուրիշ ազգերի ներկայացուցիչների պէս, բացականչում է ասել պրոֆեսորը. այս յարաբերական ճշմարտութիւնը գիտեն բոլորը և «Իւերիա»-ն էլ չի կարող այնքան տգէտ լինել, որ այս երևոյթի մասին գաղափար չունենայ։ Մեզ միայն զարմացնում է, որ պրոֆեսորը ուշադրութիւն է դարձնում այս ողբալական երևոյթի միայն մի կողմի վրայ։ Ուղիղ է՝ ամեն մի նեղուած մարդ փնտռում է մի որևէ նոր տեղ նիւթական ապահովութիւն ձեռք բերելու համար, ուղիղ է և այն՝ որ հայերը նպատակով գաղթեցին մեզ մօտ, իսկ վրացի բնակիչները և բուֆետչիկները Ռուսիա, բայց գաղթածների հետ ամեն տեղ և ամեն ժամանակ մրցում են բնիկները։

Ուրիշ տեղ բանող վրացիների բազդին այնքան էլ երանի տալու չէ, որպէս զի մէկը աշխատի խլել նրանցից և նրանց մշակութեան ասպարէզը։ Նաւթահանքներում մէկքով տապարակներ քարշ տալ,—սրանից աւելի վատ մի այլ աշխատանք դժուար թէ երեւակայէ մարդ։ Այսպիսի աշխատանքի մրցակիցները կարող են լինել այսպէս կոչուած «բոսիա կօմանդի» անդամները։

Լաւ, ասենք թէ ուրիշ մշակներ նախանձի աչքով են նայում նաւթի բանւորներին, այն ժամանակ էլ ոչ ոք իրաւունք չունի անբաւականութիւն յայտնելու վրացի մշակների վերաբերեալ, քանի որ սրանց թիւը հայրենիքից դուրս այնքան չէ որքան ու օտար մշակների թիւը մեզանում։

Ինչ վերաբերում է քանի չափ վրացի բուֆետչիկներին, որոնք առևտուր են անում օտարութեան մէջ, և քառասունի չափ վրացի չինովնիկներին, որոնք տարագրուել են մեզանից, հապա ինչ յիշելու է սրանց թիւը և կամ նրանց ազդեցութիւնը։

Բոլորովին այլ է հայ բուրժուազիան Վրաստանում. նա իւր ձեռքն է գցել տեղական Վրաստանի ամբողջ վաճառականութիւնը։ Վրաստանի կէսը չունի իւր սեփական վաճառական դասակարգը. Թիֆլիսը, Ախալցխան, Թելաւը, Սղնախը և այլն հայ վաճառականների ձեռքին են։ Ուղիղ է՝ վարելահողեր և այգիներ չեն խլել վրացիներից, բայց դրա փոխարէն խլել են վաճառականութիւնը, առանց որի հիմնիկուայ ժամանակում անկարելի է կուլտուրական յառաջադիմութիւն։

Պրոֆեսորը բաւականանում է ասել, որ հայերը չեն դառնալ մեծ կապիտալիստներ։ Հնարաւոր է։ Բայց այսօրուայ կեանքում փոքր կապիտալիստն էլ վաճառականն էլ մեծ նշանակութիւն ունեն։ Ուրեմն մրցումն վրացի և հայ վաճառականների մէջ փոքր վաճառական ասպարէզի վրայ անխուսափելի է։

Այս է պահանջում նոյն իսկ կեանքը և գոյութեան կռիւը։ Այս, այն պառակտումը, որի մասին աղաղակում է «Իւերիան», նրա հնարած-մոգոնածը չէ, այլ այդ պառակտումը գոյութիւն ունի կեանքի մէջ ամուր արմատներով։ «Իւերիա»ն միայն արտայայտիչ է կեանքի պահանջների և «Իւերիա» ից հեռու է այն միտք ստոր ձգտումը տաք տեղեր ձեռք բերելու վերաբերմամբ, որի համար մեղադրում է նրան պրոֆեսորը։ Թիֆլիսը և Վրաստանի ուրիշ քաղաքները քաղաքականապէս ռուսաց քաղաքներ են, հրամայում է յարգելի պրոֆեսորը. հայերին, ինչպէս և ռուսաց բոլոր հպատակներին օրէնքը չի արգելում ապրել վերոյիշեալ քաղաքներում։ Ուղիղ է։ Բայց չէ որ ուղիղ է և այն, որ օրէնքը միայն հայերի համար չէ և ոչ ոքի, ուրեմն և վրացիներին չի արգելում տնտեսական մրցում մղել իրենց տնտեսական մըրցակիցների դէմ։ Միայն զարմանում ենք. ինչո՞ւ է կարծում յարգելի պրոֆեսորը, որպէս թէ մենք ցանկանալիս լինենք հայերի իրաւաբանական իրաւունքների սահմանափակումն։ Երբէք «Իւերիա»ն այսպիսի բան չի քարոզում։

Պրոֆեսորը քարոզում է, որ մենք էժան կրեդիտի գործը կանոնաւորենք, եթէ որ ուզում ենք ազատուել շարչիներից։ Բայց ինչպէս երևում է վերև ասածից, մենք միայն շարչիների հետ չենք կռւում։ Բացի սրանից, ներեցէք մեզ, եթէ մենք չբաւականանք միայն էժան կրեդիտով. մենք ի նկատի ունենք էլի ուրիշ շատ միջոցներ—արտադրող և սպառող ընկերութիւններ, պահեստներ, մելիօրատիւ կրեդիտ, ուսումնարան, գրականութիւն և, որ ամենից մեծ նշանակութիւն ունեցողն է՝ հասկացողութիւն, ինքնաճանաչութիւն ազգի մեծամասնութեան։ Ազգութիւնը նման բազմաճիւղ Մեզուզայի կռուելու շատ զէնքեր ունի։ Բոյկոտը մարդասիրութեան արտայայտութիւն է, հրամայում է պրոֆեսորը։ Ուրեմն տնտեսական մրցումն էլ պիտի մարդասիրութեան արդիւնք լինի։ Յարգելի պրոֆեսորին լաւ յայտնի կլինի, որ տնտեսական մրցման ոչ միայն բոյկոտ, այլ յաճախ աբինհեղութիւն էլ է հետևել։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ ոչ աբինհեղութիւն և ոչ էլ բոյկոտ ընդունելի չեն, բայց միևնոյն ժամանակ պատմական ոչ մի ընդհանուր գործ էլ գլուխ չի եկել առանց զոհի։

Յարգելի պրոֆեսորն ուրիշ մի քանի գրողների պէս վերջերս շատ է խօսում մեզ հետ միութիւն հաստատելու մասին։ Բանից երևում է, որ նրանք միութեան կողմնակից են, իսկ «Իւերիա»-ն —միութեան հակառակ։ Բամբասանք է։ Մենք ամենից շատ ենք ցանկանում միութիւն, բայց ոչ այնպիսին, որի մասին խօսում են հայ գրողների մեծամասնութիւնը և «Ցնորքի Փուրցիկ»ի»ն։ Նրանք ցանկանում են միայն ինչ-որ պլատոնական տարօրինակ միութիւն, այսինքն նրանք ցանկանում են, որպէս զի հայ բուրժուազիան անտեսապէս հանի մեր հոգին, «միացնի իւր հետ», իսկ մենք սրա համար պիտի սիրենք նրան, ուխտաւորների նման մեր գլուխը հպատակեցնենք նրան, չընդիմանանք։

Մենք ցանկանում ենք միութիւն խոկական, ռէալական եղբայրութիւն, հաւասարութիւն։ Ուրեմն ո՞վ է խափանում եղբայրութիւն և միութիւն բացարողը։ Մենք թէ ուրիշը։ Ո՞նչով ապացուցեց հայ բուրժուազիան, որ կողմնակից է եղբայրութեան և միութեան, ինչ գործի մէջ տուաւ մեզ իւր թիկունքը։

Ի վերջոյ չեմ կարող մի երկու խօսք չնուիրել պրոֆեսորին մեզ նուիրած կոմպլիմենտների—ազնիւ և անուսում խօսքերի համար։ Հնարաւոր է, որ նա ոչ միայն իրաւաբանական կրթութեամբ, այլ և ընդհանուր զարգացմամբ և կեանքի ճանաչողութեամբ էլ բարձր կանգնած լինի մեզանից, բայց այդ բանը բոլորովին չի ապացուցանում որ Վրաստանում տիրապետող հայ բուրժուազիան եղբայրութեան և միութեան փափագող լինի։

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

—

Ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածող Խարկովի ընկերութեան գիւղական ժողովրդական գրադարանների ու ընթերցարանների յանձնախումբը կազմել է 1900—1902 թուականների իւր գործունէութեան հաշիւը, որի մէջ հետեւեալ կերպով է խօսում գիւղական հասարակութեան դէպի ձրի գրադարաններն ունեցած վերաբերմունքի մասին.

Գիւղացի ժողովուրդը դէպի գրադարան ու գրքերի ձրի բաշխման գործողութիւնն ընդհանրապէս վերաբերւում է զարմանքով ու կասկածանքով, իսկ շատ դէպքերում յայտնում է իւր անվստահութիւնը դէպի այդ հաստատութիւնները։ Ժամանակի ընթացքում այդ սառնասրտութիւնը կամաց-կամաց անհետանալու վրայ է, տեղի տալով անկեղծ, գիտակից և առաւել վստահելի վերաբերմունքի։ Ահա թէ ինչպէս է նկարագրում գիւղական մի գրադարանապետ գիւղացու վերաբերմունքը դէպի գրադարանը։ Գիւղացիներից ոմանք ասում էին. «մեզ ուզում են խաբել ասելով, թէ գրքերը ձրի են տալու. առաջ գրքերը կըտան, յետոյ էլ փողը կպահանջեն»։ Գիւղացիները գոհ են գրադարան բացուելուց, սակայն կարծում են, թէ անպատճառ իրենցից փող կուզեն։

Գիւղացիների անվստահութիւնը դէպի գրադարաններն աւելի ճիշտն ասած՝ դէպի գրքերից ձրի օգտուելը միանգամայն հասկանալի է։ Ժողովուրդը անվարժ է ձրի բան ստանալուն, նա ամեն բան ձեռք է բերում յամառ աշխատութեամբ, իւր ճակատի քրտինքով. ուստի կասկածանքով է վերաբերւում, որովհետև ձրի գրադարանների հիմնարկութեան նախագաղափարը ժողովրդին բոլորովին ըմբռնելի չէ։

Անկասկածելի է նմանապէս, որ բարենպատակ միջոցների և ձեռնարկութիւնների վերաբերմամբ եղած անվստահութիւնը խոր արմատներ ձգած լինելով ժողովրդի կեանքի մէջ, գիւղացիներին հարկադրում է մեծ շրջահայեցողութեամբ վերաբերուել դէպի այդ հոգատարութեան ամեն տեսակ արտայայտութիւնը, ինչպէս նաև դէպի հանրային գրադարանները։

Այն տեղերը ուր գրադարանները բաւական ժամանակից ի վեր գործում են, գրադարանապետները գոհունակ են խօսում գիւղացիների մասին, թէ նրանք համակրանքով ու երախտագիտութեամբ են վերաբերւում դէպի գրադարաններն և իրենց սրտում գրքերը մեծ բաւականութեամբ կարդում։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

ՓԱՐԻԶ, 3 ապրիլի (Ն. տ.).—Ֆրան-

են խոշոր գումարներ։ Միմիայն հողը արժէ 900,000 մարկ, իսկ շէնքի վրայ ծախսուել է 8 միլիոն մարկ։ Այդ հաստատութիւնն իւր մէջ կարող կանում է առնել 600 հոգի, և հաշիւները ցոյց են տալիս, որ նրա վրայ գնացած ծախսը չի անցնում այն գումարից, որ ընկերութիւնը վճարում էր զանազան հիւանդանոցների իւր հիւանդներին խնամելու համար։ Մինչդեռ ընկերութեան այդ հաստատութիւնն առողջապահական և այլ անհրաժեշտ յարմարութիւններ ունի բաղդատմամբ միւս հիւանդանոցների։ Այդ բանին վկայում են նշանաւոր բժիշկներ ու պրոֆեսորներ, որոնք անձամբ գտնուել են այնտեղ և սեփական աչքով տեսել հիւանդանոցի գիտութեան նորագոյն բժշկական կատարելագործութիւններն ու բոլոր յարմարութիւնները։

Առանձին շէնքում տեղաւորուած են ընկերութեան արհեստանոցները, առողջութիւնը վերականգնած այն հիւանդների համար, որոնք ցանկութիւն կունենան իրենց արհեստներով պարապելու։ Հարկաւոր եղած բոլոր նիւթերը տրւում են հիւանդանոցի կողմից։ Ամբողջացնելու պէտք ունեցող բանուորների բնակարանները ցրուած են եղևնու անտառի մէջ, որը, անշուշտ, ցոյց է տալիս ընկերութեան իւր հիւանդների վրայ ունեցած մասնաւոր հոգատարութեան չափը։ Ընկերութիւնը, ինչպէս երևում է, պէտք է հարկադրուի մօտ ժամանակներս իւր այդ հաստատութիւնն աւելի ևս ընդարձակելու, որովհետև պէտքը քանի գնում, մեծանում է։

—

Ահա թէ ինչ է ասել անթել հեռագրի հնարիչ իտալացի Մարկոնին իւր գիւտի ապագայի վերաբերութեամբ իւր հետ այդ մասին տեսակցողներին.

«Մի բոպէում հնարաւոր է խփել երկու հարիւր բառ, ամեն մի բառը 2 կոպէկի։ Անթել հեռագիրը կստանայ ընդարձակ կիրառութիւն և կարող է փոխարինել պոստային թղթակցութեան Եւրոպայի ու Ամերիկայի միջև։ Այս հետևանքներին է, որ ես սպասում եմ մօտիկ ապագայում։ Իմ այն յայտարարութիւնը, թէ անթել հեռագրով բառն երկու կոպէկ պէտք է արժենայ, գիւտս շահագործելու նպատակով կազմակերպուած ընկերութիւնների անդամներին մտահոգութիւն է պատճառել։ Սակայն, հաստատ գիտեմ, թէ այդպէս էլ լինելու է վերջի վերջոյ։ Անշուշտ, առաջին անգամից այդ գինը նշանակել դժուար է և մենք Կանադայի կառավարութեան հետ պայմանաւորուել ենք բառին առնել 20 կոպէկից ոչ աւելի։ Սկզբում այդ գնի վրայ էլ կանգ կառնենք. սակայն յետոյ կամաց-կամաց կիջեցնենք։ Ծովային հեռագրական ընկերութիւններին բառը 20 բուբլուց 50 կոպէկի իջեցնելու համար հարկաւորուեց 30 տարի. իսկ մենք շատ աւելի կարճ ժամանակում կարող կլինենք բառը մինչև 2 կոպէկի իջեցնել։ Միտք կայ, ձեռքներս եղած աշխատութիւններից յետոյ, միացնել Իտալիան Արգենտինայի հետ, որոնց միջև եղած տարածութիւնն է 4000 մղոն»։

Լազ

սիան աւանդութեան երկիր է մոլութեանց և կեղծիքի կողմից։ Մի կեղծիք կարող է դարեր տևել, ինչպէս մի խայտառակ երևոյթ, և մի օրում կարող է ամեն բան բացուել ու վերջանալ։ Կեղծիք առարկաների, պատկերի, մետաղի, մինչև անգամ կաթի, իւղի, արմատեղէնի և այլն ֆրանսիացու սովորական արհեստն է. ամեն ինչ կեղծւում է և միայն շատ հարուստն ազատ է այդ կեղծածին չմօտենալուց, ինչ էլ որ լինի՝ ուտելիք, հագնելիք թէ զարդ։ Եւ այդ որովհետև վերաբերում է «ազատ արդիւնաբերութեան» և «ազատ մրցման», ուստի օրէնքն էլ թէև կայ, բայց կեղծիքի համար մնում է։ Սակայն ֆրանսիացիք, որ պաշտում են իրենց թանգարանները, ինչպէս Լուվրի, Վերսալլի, Լիւքսեմբուրգի և այլ բազմաթիւ թանգարանները, որոնց մէջ ամենանշանաւորը հարկաւ Լուվրի թանգարանն է,—ֆրանսիացիք սաստիկ կատաղում են, որ ասելի կեղծիքներ են բացուել Լուվրի ամենաթանկագին կոթողների մէջ, կոթողներ, որոնք հարիւր հազարներով և միլիոններով են գնուած։

Արդէն մի քանի տարիներ առաջ Լուվրի թանգարանում բացուեց, որ «Ջամբրամի թագը», որ Լուվրը գնել էր մի քանի միլիոն ֆրանկով կեղծ է, իսկ այժմ մի ուրիշ նշանաւոր կեղծիք է բացուել մօտ մի ամիս է, որ Պարիզի մամուլը և հասարակական կարծիքը տակն ու վրայ է լինում։ Մի ժամանակ, բոլոր լրագրները ցնծութեան աղաղակներով հաղորդեցին աշխարհին, թէ Լուվրի ֆրանսիական մի հնութիւն է ձեռք բերել 400 հազար ֆրանկով, որ մի քանի բիլիոններ արժէ և թէ աշխարհիս ոչ մի թանգարանում այդպիսի հնութիւն չկայ։ Այդ հնութիւնն էր իբր թէ մեզնից դարերից առաջ հնդկական-պարսկական Սաիթա-Փառնէս թագաւորի թագը։ Լուվրի հնագիտական և պատմական յանձնաժողովը, որ կառավարչական հաստատութիւն է և կազմակերպուած մեծ գիտնականներից, ընդունել է վաճառողից այդ Սաիթա-Փառնէսի թագը, արձանագրել է, որ նա իսկականն է և Լուվրի թանգարանի մէջ նրան տուել էին ամենապատուաւոր տեղը, պահում էին ապակու տակ և նրա վրայ, ինչպէս և յայտնի մեծ ադամանդի վրայ, առանձին պահապան էր նշանակուած։ Միլիոնաւոր մարդիկ անհամբեր վազում էին այդ հնագոյն պատմական թագը տեսնելու։ Բայց սրանից մի քանի օր առաջ Պարիզի բոլոր լրագրները տպեցին թէ Սաիթա Փառնէսի թագի կեղծ լինելու կասկածներ են ծագել, և մանրամասն քննութիւնը ցոյց տուաւ, որ ոչ միայն այդ թագն է կեղծ, այլ Լուվրի և ուրիշ թանգարանների գանձերը լիքն են կեղծ արձաններով և կեղծ նկարներով, ներկայացրել են ամենաշնչին, անգէտ մարդիկ մեծ արուեստագէտների անունից։ Գեղարուեստից և լուսաւորութեան մինիստրի նշանակած քննութիւնը ցոյց տուաւ, որ Պարիզում մի քանի տասնեակ տարիներից ի վեր կազմուած է մի կեղծող ընկերութիւն, որ ունի գործակալներ աշխարհի բոլոր ծայրերի այն կեդրոններում, ուր հինաւուրց պատմութիւն կայ։ Այդ աւազակային խմբի մի մասը մնում է միշտ Պարիզում, որ քիչ-շատ շնորհալի նկարիչներին պատուիրում է հանել Ռաֆայէլի, Միքէլ-Անժելոյի, Կրեօզի և այլ նշանաւոր նկարիչների նկարների պատճէնները, նոյնպէս և արձաններ շինել մեծ արձանագործների անունից և այդ նկարներն ու արձանները զանազան ոլոր մոլոր ճանապարհներով վաճառւում է եղել Լուվրին ու Ֆրանսիայի զանազան թանգարաններին, և ոչ ոք տասնեակ տարիների ընթացքում չէ իմացել խորդութիւնը, և դրամաշորթները մի քանի տասնեակ միլիոններ են շորթել Ֆրանսիայի գանձարանից։

Խաղանիքի բացման առիթ է տուել մի շատ հասարակ դէպք։ Պարիզի Մոնմարթի թաղում արհեստագիտական տուն ունեցող մի նկարիչ Էլինա անունով մի օր մի այգում իւր ծանօթների հետ ճաշելիս, մի քիչ որ լիքեօրներից գլուխը տաքանում է, ի մէջի այլոց ասում է, որ Լուվրի մէջ գտնուած Սաիթա Փառնէսի թագը իւր ձեռագործն է։ Այդ լուրը լրագրներին հասնելով, ինչպէս վերն ասացի, անսահմանալի աղմուկ հանեց։ Որքան տասնեակ տարում այցելուներ էին եկել Լուվրում, մի շաբաթուան ընթացքում դրանից աւելի շատ ամբոխ վազում էր մի կողմից ծիծաղելու Լուվրի խաբուած կառավարիչների վրայ, միւս կողմից ճըշմարտապէս հիանալու այդ երևելի պատմական թագի կեղծիքի վրայ։ Ցիրաւի, այդ թագն այնքան երևելի է կեղծած, որ յիմարացրել է մասնագէտ գեղարուեստագէտների և ամբողջ սերունդներ։ Մի ամսուան մանրամասն քննութիւնից պարզուեց, որ Էլինա նկարիչը սուտ է ասել, որ թագն իւր ձեռագործը չէ, բայց թէ նա իսկական չէ, այդ բանին համոզուել են արդէն ամենքը, և մինիստրութեան հրամանով թագը թագցրել են Լուվրի նկուղներից մէկում։

Այդ դէպքը միայն այն մեծ նշանակութիւնն ունեցաւ, որ բացուեց մի մեծ դաւադրութիւն, մի ահագին ընկերութիւն կեղծողների, որոնց մասնակցել է Էլինան և ուրիշ շատ շատերը։ Սկզբում այդ Էլինան պնդում էր և նոյն իսկ դատարանում ասաց, որ թագը իւր ձեռագործն էր և որովհետև ուրիշ թեկնածու չկար, քիչ էր մնում, որ նրան ներեն իւր բոլոր միւս կեղծիքների համար, այդ թագի վրայ գործադրուած մեծ արուեստի պատճառով, բայց դրա գաղտնիքն էլ բացուեց էլի մի չնչին դէպքից։ Մի ռուս մարդ ու կին, որոնք ապրում են Պարիզում, կարդալով լրագրների մէջ այդ թագի պատմութիւնը, նամակ գրեցին Պարիզի բոլոր թերթերին, յայտարարելով թէ այդ թագի հեղինակը Օդեսայում ապրող մի ռուս արհեստագէտ է Ռաչիմովսկի անուն, մի մարդ՝ որ շատ նուրբ ձեռագործներ ունի, բայց այնքան համեստ է, այնքան հեռացած է աշխարհից, որ նրան շատ քչերն են ճանաչում։ Այդ ամուսինները միաժամանակ շատ մօտ բարեկամներ լինելով Ռաչիմովսկուն, ուղարկել էին նրա պատկերը, որ տպուեց «Մաթէն» թերթում. Ռաչիմովսկու լռութիւնը բացատրում էին նրա համեստութիւնով և ասում էին, որ նրան պատուիրող ֆրանսիացին է թագը կեղծողը, որովհետև նա խնդրել է Ռաչիմովսկուն ոչինչ չխօսել այդ գործի մասին։ Բայց երբ Ռաչիմովսկին իմացել է, որ իւր ձեռագործը Լուվրումն է իբրև «իսկական» թագ Սաիթա-Փառնէսի, իւր բարեկամներին ասել է անկեղծօրէն. թէ շատ ուրախ է, որ իւր երկը այնքան ճիշտ է եղել պատմականօրէն, որ իսկականի տեղ է անցել, բայց թէ նա իսկականը չէ, այլ իւր ձեռի գործ է։

Պէտք էր տեսնել թէ ինչեր էին անում այս նամակներից յետոյ ֆրանսիական մամուլի շրջանում. խմբագրները միմեանցից առաջ էին վազում, «Ֆիգարօն» յատուկ հեռագրներ էր ուղարկում Ռաչիմովսկուն, «Մաթէնը» նոյնպէս, և Ռաչիմովսկին վերջապէս ոչ միայն խոստովանեց, որ ճշմարիտ թագն իւր ձեռագործն է, այլ և ապացոյցները Պարիզ բերաւ։

Կեղծիքի ընկերութեան մասնակցողները դատի ենթարկուեցան, բայց երևի նրանց էլ այնպէս կազատեն, ինչպէս Էմբերներին...

Ս. Հախումեան

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ՈՒՍՄԱՆ ՀԱՐՑԸ

I.

ԲԵՐԼԻՆ, 4 ապրիլի (ն. տ.).—Եւրոպական երկրներում գոյութիւն ունեցող հումանիստական գիմնազիոններում իբրև առաջնակարգ առարկաներ, յայտնի է, աւանդւում են լատիներէն և յունարէն լեզուները։ Եւ որովհետև գիմնազիական կուրսն աւարտողներից շատերն այնպիսի ասպարէզ են ընտրում իրենց կեանքի համար, որտեղ նրանք ամենևին գործադրել չեն կարող այդ լեզուները, որոնց համար նրանք տարիներ շարունակ ահագին ժամանակ և աշխատանք են գործ դրել, ուստի և բնական է այն դժգոհութիւնը, որ զարթնում է յիշեալ առարկաները գիմնազիոններում իբրև առաջնակարգ առարկաներ աւանդելու դէմ։ Այդ դժգոհութիւնն ու ժամանակակից պահանջներն էին, որ առաջ բերին այդ երկրներում այսպէս կոչուած ռէալական դպրոցները, որտեղ դասախօսութեան սերունդին աւանդւում են այնպիսի առարկաներ, որոնք աւելի գործնական հողի վրայ են դրուած։ Հին լեզուների փոխարէն այդ դպրոցներում աւանդւում են նոր լեզուները, որոնք ևս գործնական կեանքում օգտաւէտ են աւելի և նպատակայարմար։ Բացի ռէալական դպրոցներից, Գերմանիայում գոյութիւն ունին նաև այսպէս կոչուած ռէալ գիմնազիոններ, որտեղ հին լեզուներից աւանդւում է միմիայն լատիներէնը, այն էլ՝ սահմանափակ ծրագրով։

Բայց և այնպէս Գերմանիայի դպրոցական սահմանում առաջնակարգ տեղ են բռնում դարձեալ հումանիստական գիմնազիոնները, որտեղ հին լեզուներին շարունակւում է տալ առաջնակարգ տեղ և որոնք ուսուցանւում են բաւական ընդարձակ ծրագրով։ Մի երկու տարի առաջ, երբ Ռուսիայում խօսւում և գրւում էր դպրոցական ռեֆորմների մասին, երևաց, որ իշխող է ընդհանրապէս դժգոհութիւնը հին լեզուների այդ չափով դասաւանդման ի դէմ։ Այդ առթիւ մէկ հայ յօդուածագիր, խիստ հակառակ հին լեզուների, յիշատակում է իբրև իրական (!?) փաստ, թէ ռուսական դպրոցական կառավարութիւնը, որը մտադրուել է վերացնել կամ սահմանափակել հին լեզուների դասաւանդումը, այդ գեղեցիկ օրինակն առնում է մեր ժամանակի Աթէնքից, Գերմանիայից, որտեղ դըպրոցներից վաղուց հանուած է հին, փառաւոր յունարէն և լատիներէն լեզուների դասաւանդումը։ Կարդացի այն ժամանակ այդ խօսքերը և մնացի ապշած, թէ իրօք մեղնում ենք, չափ յանդուգն է աւելի կարելիութիւնը, ինչպէս մարդիկ առանց քաշուելու կարող են խօսել իրենց չգիտցած բաների մասին—որոնց մասին սակայն տեղեկութիւն հաւաքելը նրանց համար խիստ դիւրին կլինէր։ Խնդիրն այն է, որ այսօր Գերմանիայում ոչ միայն չեն վերացուած գիմնազիոնները, այլև այդ դպրոցներում աւանդւում են յունարէն և լատիներէն իբրև առաջնակարգ առարկաներ ընդարձակ ծաւալով, շատ աւելի, քան Ռուսիայի գիմնազիոններում։ Այլ հարց է, հարկ, թէ որչափ օգտաւէտ և նպատակայարմար է այդ լեզուներին այդչափ կարևոր տեղ տալը։ Եւ այժմ այդ «հարցն» է, որ կրկին վիճաբանութիւնների և կարծիքների փոխանակութեան առիթ է տալիս։

Հին լեզուների դասաւանդող հակառակորդները պահանջում են դըպրոցական նոր ռեֆորմներ։ Այսպիսի ռեֆորմներին էր վերաբերում ուսման հարցերից առաջինը, որոնք երեկ Բերլինի Herrenhaus-ում քննութեան առարկայ դարձաւ,—միջնակարգ դըպրոցների կրթութիւնը։ Երկրորդ հարցն էր աստուածաբանական գրութեան աւանդումը գերմանական համալսարաններում։ Առաջին, դպրոցական ռեֆորմների քննութեան հարցին մասնակցում էին թէ քաղաքագէտներ և թէ պրոֆեսորներ ու մանկավարժական ներկայացուցիչներ։ Եւ դասական պաշտպաններ գիմնազիոնների հին ուղղութեան, սակայն մեծ էր աւելի դժգոհների թիւը։ Ցայտնի քաղաքագէտ պրոֆեսոր Շմոլլեր իւր արտասանած ճառի մէջ շեշտեց այն հանգամանքը, թէ դպրոցական ռեֆորմներն անհրաժեշտ են և դրանք անմիջական արտայայտութիւն են գերմանական ընդհանուր առաջադիմութեան և քաղաքական արդի կեանքի, նա ասաց. «Անհրաժեշտ է դպրոցական կրթութեան գործը վերափոխել։ Մենք այժմ չենք ապրում իբրև քաղաքացիներ գերման խաղաղ, մանր պետութիւնների, մենք դարձել ենք այժմ մէկ մեծ գործնական ազգ։ Այսպէս՝ վերջին 10—20 տարիների ընթացքում կատարուած գիմնազիական ռեֆորմներն անհրաժեշտ հետևանքներ էին մեր ունեցած պատմական հոգևոր մեծ պրոցեսի»։

Զարունակուեցին վիճաբանութիւններն այս խնդրի մասին։ Կառավարութեան կողմից մասնակցող սրուց այն հանգամանքը, որ ըստ բարձրագոյն կարգադրութեան՝ համաւասար են ճանաչուած գոյութիւն ունեցող զանազան տեսակ դպրոցները, նաև թէ անհրաժեշտ է դարձեալ, որ անցնէ մի միջոց, մինչև որ կարգադրութեան հետևանքներն երևան գան։

Այսպէս, այս խնդիրը դեռ մի որոշ հետևանքի չհասած՝ խորհուրդն անցաւ երկրորդ խնդրին։

Ար. Աբեղեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՐՔԻԱ.— «Նով. Վր.»-ն ստացել է հետևեալ հաղորդագրութիւնն այն յարձակման մասին, որ ալբանացիները գործել են մարտի 16-ին և 17-ին Վուչիտրնի և Միտրովիցի վրայ.

Հաւաստի աղբիւրներից հաղորդում են Ուսքիւբ, որ Դրենիցի, Վուչիտրնի և Միտրովիցի գաւառների արնաուտները (ալբանացիները), որոնք պատկանում են շալևա ցեղին, հաւաքուել էին Մուրադ Թուլ-բէկի մօտ (սուլթան Մուրադի գերեզմանը) Կոսովոյի դաշտում, Պրիշտինի մօտերքը, և որոշել էին յարձակում գործել Միտրովիցի վրայ ապացուցանելու համար, որ իրենք չեն ցանկանում ընդունել նոր ռեֆորմներ և զայրացած են այդ ռեֆորմներին համաձայնութիւն յայտնող ցեղապետների դէմ։ Մարտի 16-ին արնաուտները հասան Վուչիտրն, գնալով դէպի Միտրովից, և սկսեցին այնտեղ վայրագութիւններ գործել։ Ուսքիւբ-Պրիզրէնի միտրոպոլիտ սրբազան Նիկիֆորը Վուչիտրնի սերբ ուղղափառ համայնքից մարտի 17-ին ստացաւ հետևեալ զեկուցագիրը։ «Մարտի 16-ին Վուչիտրնում մի սերբի թաղում կար։ Ցուղարկաւորութեան հանդէսը գնաց դէպի քաղաքի ծայրում գտնուած եկեղեցին դաշտով, չհամարձակուելով անցնել քաղաքի փողոցներով, տեղական արնաուտներից վախենալով։ Պատարագի ժամանակ եկեղեցին լուր հասաւ, որ արնաուտների մի ամբոխ առաջ է շարժւում դէպի քաղաք Պրիշտինի խճուղով։ Արնաուտներն առաջին անգամ տեսան կանայք և սկսեցին սուր ու շիւան բարձրացնել. Քահանաները եկեղեցին փակել, բայց արնաուտները կոտրեցին դուռը և հրացանները ձեռքներին ներս խուժեցին եկեղեցին, ջարդեցին սեղանի գանձը, մտան սեղան, որտեղ սուրբ հաղորդութեան առաջ կանգնած էր հայր Փարկէշը, և սկսեցին ռմբակայն խուզարկութիւն։ Երբ թէ զէնք չէին որոնում, բայց զէնք չգտնելով, սկսեցին կողոպտել եկեղեցին... Եկեղեցին կողոպտելուց յետոյ, արնաուտները ներս խուժեցին քահանայի տունը, որը նոյնպէս կողոպտեցին, իսկ նրա որդին, Ժիւկօ, չարչարանքների ենթարկուեց։ Ցետոյ խուզարկութիւն կատարեցին սերբիական ուրիշ տներում։ Կողոպուտը տևեց մինչև երեկոյեան ժամը 7-ը, և միայն ուշ գիշերը սկսեցին իրենց տները վերադառնալ ամբողջ ժամանակ եկեղեցում մնացած սերբերը։ Մեռելը հէնց այնպէս էլ մնաց անթաղ եկեղեցում, որը փակուած է»։

Վուչիտրնից արնաուտները մարտի 17-ին գնացին դէպի Միտրովից. սրանց հետ հետզհետէ և աւելի ու աւելի միանում էին նոյն տեղի զինուած մարդկանց խմբեր։ Հասնելով Միտրովիցի մօտ, ալբանացիները դիրք բռնեցին հովտում, Սիտնիցայի աջ ափին. ընդամենը 2000 հոգի էին, ամենքն էլ զինուած։ Միտրովիցի իշխանութիւնները նրանց առաջարկեցին հեռանալ և 3 ժամ ժամանակ տուին նրանց մտածելու համար։ Երբ այդ ժամանակը լրացաւ, և նրանք հրաժարուեցին հեռանալ, զօրքերին հրամայուած էր կրակել, բայց զինուորները սկզբում չհամաձայնուեցին և միայն այն ժամանակ, երբ թուրք կապիտանը ատրճանակով սպանեց տեղնիտեղը 4 զինուորի, անհնազանդութեան համար, զինուորները ըսկսեցին կրակել հրացաններն ու թնդանօթները. այդ բանը տևեց, ըստ թըրքական զեկուցումների, 45 րոպէ, իսկ ականատեսների պատմելով—օրուայ ժամը մէկից մինչև երեկոյ։ Մարտինի հրացաններով զինուած ալբանացիները չկարողացան դիմանալ Մաուզերի հրացանների կրակին և ցան ու ցրիւ եկան, թողնելով շատ (ճիշտ յայտնի չէ՝ որքան) սպանուածներ և վիրաւորներ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մակեդոնիայում ներկայումս կատարուող դէպքերը յարմար առիթ են ներկայացնում եւրոպական մամուլին, հրապարակ հանելու Բալկանեան մանր տէրութիւնների զինուորական ոյժը։ Բեռլինի «Kreuz-Zeitung»-ի մէջ հրատարակուել է այդ մասին վիճակագրական մի յօդուած, որի մէջ առաջ է բերուած հետևեալ թուական փաստերը.

«Փոքրիկ Ղարադաղը ունի 38 հազար զօրք, իսկ Սերբիայի զինուորական կազմի մէջ թէև հաշւում են 250 հազար հոգի, սակայն իրականապէս, պատերազմի ժամանակ նա կարող է հանել ընդամենը միայն 100 հազար մարդ։

Ամենամեծ ոյժը բալկաններում ներկայացնում է Բուլղարիան. պատերազմի ժամանակ նա կարող է հանել 200 հազար հոգի։ Սակայն այդ իշխանապետութիւնը, ներկայումս գտնուելով ֆինանսական ծանր պայմանների մէջ, դժուար թէ, առանց իւր գոյութեան վտանգ բերելու, կարողանայ պատերազմ սկսել։ Թէ ինչ աստիճան դըժուարութիւն է զգում ներկայումս բուլղար կառավարութիւնը, կարելի է մակաբերել այն բանից, որ այդ երկրի զինուորական մինիստրութիւնը, ծախսերի մէջ խնայողութիւն անելու նպատակով, ստիպուած է եղել վերջին միջանի տարին զինուորական խոշոր զինավարժութիւններից (մանեօվր) յետ կանգնել։ Ինչ վերաբերում է Ցունաստանին, Ռումինիային, Բալկանեան երկու տէրութիւններին, որոնք Սերբիայի, Բուլղարիայի և Ղարադաղի թշնամի պետութիւններ են համարւում,—դրանք զինուորական մի առանձին ոյժ չեն ներկայացնում։ Ցունաստանը նոյն իսկ չէ կարողացել իւր ոյժերը հաւաքել 1897 թ. թիւրք-յունական պատերազմի հարուածներից յետոյ։ Սրանից հինգ տարի առաջ յունական զօրքը վերակազմելու նպատակով պատրաստուած ծրագրը մինչև այժմ էլ գոյութիւն ունի միայն թղթի վրայ։ Թիւրք յունական պատերազմից առաջ տարածուած կարծիքն այն էր, թէ Ցունաստանը կարող կլինէր 162 հազար զօրք հանել, որից 82 հազարը յատկացնում էր պատերազմական գործողութիւններին, իսկ 80 հազար—երկրի պաշտպանութեան, մինչդեռ պատերազմի հէնց սկզբից երևեց, որ այդ տէրութիւնը հազիւ կարող է ընդամենը 80 հազար զօրք հանել, որից 50 հազարը միայն պէտք է առաջ տանէր պատերազմական գործողութիւնները։ Զատ բնական է, որ այդքան սահմանափակ ոյժերով դժուար պէտք է լինէր բէւ շատ յաջող պատերազմ վարել։ Պաշտօնական ծանուցման մէջ Ռումինիայի զօրքի թիւը ցոյց է տրւում 170,000, սակայն իրականութիւնն այն է, որ այդ երկիրը հարկը պահանջած դէպքում չպէտք է կարողանայ այդ թուով զօրք հանել»։

ՍԵՐԲԻԱ.—Հին-Սերբիայում ալբանիացիների ունեցած վերջին շարժումները բնականաբար շատ վատ կերպով պէտք է ազդէին Բալկանեան մանր պետութիւնների վրայ, որոնք գալիք բարդութիւններից առաջ անպատրաստ չգտնուելու համար, ժամ առաջ հարկադրուած են իրենց պատրաստութիւնները տեսնել։ Վիեննայի լրագրներին Բելգրադից խփուած հեռագրներից երևում է, որ «Սերբիայի՝ պատերազմական պատրաստութիւնների ձեռնարկներն առաջացել է գլխաւորաբար այդտեղ ստացուած այն լուրերից, թէ ալբանիացիները վճռել են արշաւել Եէնի Բազարի վրայ։ Խնդիրը երբ վերա-

բերում ալբանիացիներին, որոնց համար միջազգային օրէնք ասուած բանն երբէք գոյութիւն չունի, տարածուած այդ լուրերն և նրանց առաջ բերած երկիւղը բոլորովին էլ անհիմն չի կարելի համարել։ Սերբիայի կողմից ձեռք առնուած միջոցներն առայժմ սոսկ ոստիկանական բնաւորութիւն ունենալով, պէտք է ծառայեն գլխաւորաբար սահմանների պահպանութեան և Նէնի-Բազարից ու նրան մօտ գտնուած տեղերից հեռացող սերբ փախստականներին պաշտպանելու գործին։ Թէև պաշտօնական ծանուցման մէջ ասուած է նաև, թէ Հին-Սերբիայում բարդութիւններ առաջ եկած դէպքում պահեստի զօրքն ևս զէնքի պէտք է կոչուի, սակայն, այդ աւելի պէտք է իբրև սպառնալիք ընդունել քան վերջնական որոշում, որովհետև սերբ կառավարութեան կողմից արուած որևիցէ անզգոյշ քայլ անհագին վնասներ կարող է հասցնել Սերբիային, իսկ, ընդհակառակը, բարեբեր հետևանքներ կունենայ Բուլղարիայի համար»։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—

Մարտի 31 ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Նաւագնացութիւնը սկսուեց։

ՄՈՍԿՈՒԱ.—Նոյին Կայսերական Մեծութիւնները սկսեցին ապաշխարութիւնը և աղօթեցին պալատական Սրբեան եկեղեցում պատարագի ժամանակ։ Պատարագիչն էր Նոցին Մեծութիւնների ծխատէր Եանիշեր։

ՑԵՑԻՆԷ.—Չեռնոգորիայի մահուան առթիւ իշխանը Թագաւոր Կայսրին հեռագրով ցաւակցութիւն յայտնեց։

ՊԵԿԻՆ.— Խնամակալ-կայսրուհին մի հրաման է հրատարակել, որի մէջ գովաբանում է Իւն Լուին և հրամայում է մահից յետոյ նրան նոյնպիսի պատիւներ տալ, ինչպէս Լիհունգչանգին։

ՓԱՐԻԶ.—Լուբէն մարտի 30-ին մեկնեց Մարսէյլ որտեղից կճանապարհուի Ալժիր։ Նրան ուղեկցում են Փալիէրը Դելկասսէն և Պելլտանը։

ԱԹԷՆՔ.— Պալատում տեղի ունեցաւ հավգիսաւոր ճաշ։ Թագաւորը գերմանական պրինցներին յանձնեց Փրկչի առաջին աստիճանի շքանշանները։

Արտաքին գործերի մինիստր Օկուղէս ստորագրեց Թիւրքիայի հետ կնքուած առևտրական նոր դաշնագիրը։

ՄՈՍԿՈՒԱ.— Նոցին Կայսերական Մեծութիւնները և Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչն Ամուսնու և Մեծ Իշխան Պաւէլ Ալէքսանդրովիչի որդոց հետ պալատական քահանայ Եանիշեւի ուղեկցութեամբ, այցելեցին Հրեշտակապետաց և Աւետման տաճարները։

Ապրիլի 1-ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Կայսերական պալատի մինիստրը, վերադառնալով Պետերբուրգ, մինիստրութեան կառավարութիւնը նորից առաւ իր ձեռքը։

Կ. ՊՈԼԻՍ.—Երէկ, ռուսական դեսպանատան եկեղեցում, Չեռնոգորիայի մահուան առիթով կատարուեց հոգեհանգիստ։ Ներկայ էր դիւանագիտական մարմինը քաղաքացիական հագուստով։

ՀՌՈՄ.—Այսօր բացուեց գիւղատնտեսական միջազգային նօթերորդ վեհաժողովը։ Ներկայ էին թագաւորը, թագուհին և մինիստրները։

ՄԱՐՍԷՅԼ.—Քաղաքային խորհրդարանում կայացած ընդունելութեան ժամանակ, ռուսական հիւպատոսը յայտարարեց, թէ բոլոր պետութիւնների իր պաշտօնակիցներն իրենց երջանիկ են զգում հաղորդակից լինելով մարսէյլցիների ուրախութեան՝ Լուբէի ընդունելութեան առիթով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բարձրագոյնս հաստատուած կարգի համաձայն, զինուորական խորհրդի կողմից որոշուել է հետևեալը. շտաբի մէջ համարուող հոսմէական կաթոլիկ քահանաներին և լիւտերական-աւետարանական քարոզիչներին նշանակել 900 րուբ. ռոճիկ, ներկայումս գոյութիւն ունեցող 366 րուբ. ռոճկի և 183 ր. ուտեստի գումարների փոխարէն։

ԹԵՐ ԵՒ ԴԷՄ

—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծ. պ. խմբագրապետ, խնդրեմ տեղ տաք այս նամակիս իբրև պատասխան պ. Խ. Տէր-Մարգարեանի նամակի, որ լոյս տեսաւ «Նոր-Դար»-ի 14 համարում։

Նախ ես «Նոր-Դար»-ի 182 համարում՝ գոյութիւն չունեցող պարտքի վերաբերեալ ոչինչ չեմ խօսել այլ փաստերով հաստատել եմ եկեղեցու կալուածների կապալով տալու ձևերն տալ լինելը։ Իսկ պ. Խ. Տէր-Մարգարեանը իր նամակով դուրս գալով «Նոր-Դար»-ի ընթերցողների առաջ, մինչև անգամ նեղութիւն չի տուել իրեն իմ նամակները նորից կարդալ և նորէն պատասխան գրել. ինչպէս այդ տեսակ վարած պոլեմիկան նրա համար ձեռնտու է, քանի որ նա, խօսում է ոչ թէ բուն հարցի վերաբերեալ, այլ ինչ որ հաշիւներ է լուծում ինձ հետ։

Ես անցեալ տարուայ «Նոր-Դար»-ի 191 համարում լոյս տեսած նամակովս ասել եմ, և ներկայումս էլ կասեմ, որ այդ տեսակ պարտք գոյութիւն չի ունեցել այլ այդ պարտքը փանտազիայի արդիւնք է, և «Նոր-Դար»-ի 14 համարում պ. Տէր-Մարգարեանի մէջ բերած փաստերը կարող են իբրև փաստ ծառայել իրեն պ. Տէր-Մարգարեանին, իսկ բանիմաց մարդկանց ծիծաղը կըշարժեն։ Գ. Տէր Մարգարեանը «Նոր-Դար»-ի 14 համարում դուրս է գալիս փաստով, թէ Թիֆլիսի փոխադարձ ընկերութեան բանկին (գրքի №847) յանձնել է եկեղեցու օգտին 2000 րուբլի առանց մէջ բերելու ամսաթիւը, որից երևար թէ այդ գումարը պ. Տէր-Մարգարեանը երբ է ներկայացրել բանկին, քանի որ արդարութիւնն այդ է պահանջում։ Եթէ այդ գումարը ներկայացրել էր բանկին, ինչո՞ւ անցեալ տարուայ «Նոր-Դար»-ի 185 համարում լոյս տեսած իր նամակի մէջ իբրև փաստ չէր յիշում այդ բանը, այլ դուրս էր եկել հասարակութեան առաջ լոկ խօսքերով։ Այս հանգամանքը մեզ թելադրում է կարծելու, որ այդ 2000 ր. բանկին ներկայացրել է «Նոր-Դար»-ի 191 համարում իմ նամակը լոյս տեսնելուց յետոյ, որպէս զի նորից հրապարակ դուրս եկած ժամանակ փաստ ունենայ իր ձեռքին (գրքի № 847)։ Այս խաղը նման է երեխանց խաղացած աչքակապուկի։

Գ. Տէր Մարգարեանը պարծենալով ասում է թէ Թանդոյեանց եկեղեցին ոչ մի երէցփոխի օրով փող չի ունեցել և ինքն է միայն խնայել 2000 ր.։ Ախար նախկին երէցփոխները, որ չեն կարողացել փող պահել, այն ժամանակ եկեղեցու եկամուտով ուսումնարանի գոյութիւնն էր պահպանւում։ Իսկ քանի որ ներկայումս պ. Տէր Մարգարեանն ուսումնարանի վրայ ոչինչ ծախս չունի, պարզ է, որ փող պէտք է հաւաքուի, ուրեմն և պարծենալու ոչինչ չըկայ։

Գ. Տէր Մարգարեանն ասում է, որ ես եկեղեցին իրեն յանձնել եմ քարուքանդ դրութեան մէջ և ոչ թէ արտաքինով և ներքինով պայծառ դրութեան մէջ, ինչպէս ես էի գրել «Նոր-Դար»-ի 191 համարում, և իբրև փաստ մէջ է բերում ծխական ժողովի մի արձանագրութիւնը, որով ինձ դատի են ենթարկում, իբրև եկեղեցին Գ. Տէր-Մարգարեանցին քարուքանդ դրութեան մէջ յանձնելու համար։ Գ. Տէր Մարգարեան, քանի որ, այդ տեսակ բան գոյութիւն չունի, որ եկեղեցու քարուքանդ լինելու համար ինձ դատի ենթարկէին, մինչ չէք խղճահարւում, որ ընթերցող հասարակութեան առաջ դուրս էք գալիս չինծու փաստերով, և չեմ հասկանում թէ դրանով ո՞ւմն էք ցանկանում խաբել, ձեզ թէ՞ ուրիշներին։ Անհերքելի փաստ է, որ դուք եկեղեցին ստացել էք պայծառ դրութեան մէջ և դրա համար ինձ ոչ ոք չէր կարող դատի ենթարկել։

Հիմայ մի քանի խօսք այն գործի վերաբերեալ, որ ուղարկուած է քննիչին, ինչպէս ասում է իր նամակում Գ. Տէր-Մարգարեանը։

Նախ այդ գործը ոչինչ կապ չունի եկեղեցու պայծառութեան կամ քարուքանդ լինելու հետ, այլ առանձին գործ է։ Գ. Տէր-Մարգարեանց, ես այդ գործի վերաբերեալ ձեզ և ձեր արբանեակներին կասեմ, որ այդ այն տեսակ գործ է, որ չի կարող կանոնաւոր գործ դառնալ, և այդ տեսակ գործերի արժանաւոր տեղն է անպէտք թղթերի զամբիւղը, որտեղ եթէ չի շպրտուած արդէն, մօտիկ ապագայում կտեսնի իրեն արժանավայել տեղը, որով կերևայ, թէ ինչ ծիծաղելի դեր էք խաղացել դուք այդ գործում։ Ձեր փչած զուռնի ձայնը մեծ էր, բայց մեծ սարը մի պստիկ մուկ էլ չծնաւ։

Ս. Ղամազեանց

Թիֆլիս, 3 մարտի։

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

—

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթի և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկօ—միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունւում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտ 12—1 ժամը

Երեկոյեան 4—6 »

Թիֆլիս, Բեբուտովսկի փողոց № 41 տուն Արարատեանի։

(1141) 100—35

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Սկսած 1902 թ. հոկտեմբերի 15-ից (ժամերը նշանակուած են Պետերբուրգի հաշուով, փակագծերում Թիֆլիսի հաշուով)

Պոստատար գնացքը № 3 Բագուից Թիֆլիս հասնում է գիշերուայ 11 ժ. 45 ր. (1 ժ. 03 ր., հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 22 ր. (7 ժ. 20 ր.), մեկնում է Թիֆլիսից—Բաթում երեկոյեան 7 ժ. 20 ր. (8 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 8 ժ. 04 ր. (9 ժ. 2 ր.)։

Մարդատար գնացքը № 5 Բագուից—Թիֆլիս մեկնում է ցերեկուայ 2 ժ. 42 ր. (4 ժ. հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 45 ր.) 8 ժ. 43 ր.) մեկնում է Թիֆլիսից—Բաթում առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.)։

Պոստատար գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է երեկոյեան 9 ժ. 54 ր. (10 ժ. 52 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) մեկնում է Թիֆլիսից—Բագու ցերեկուայ 11 ժ. 5 ր. (12 ժ 03 ր.) հասնում է Բագու առաւօտեան 5 ժ 47 ր. (7 ժ. 05 ր.)։

Մարդատար գնացք № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է առաւօտեան 7 ժ. 50 ր. 8 ժ. 35 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան (8 ժ. 48 ր. (9 ժ. 33 ր.). Թիֆլիսից—Բագու մեկնում է երեկոյեան 9 ժ. 11 ր. (10 ժ. 09 ր.), հասնում է Բագու ցերեկուայ 1 ժ. 12. ր. 2 ժ. 2 ր.)։

Պոստատար գնացքը № 70/71 Թիֆլիսից—Կարս մեկնում է երեկոյեան 10 ժ. 29 ր. (11 ժ. 27 ր.). հասնում է Սանահին 3 ժ. 30 ր. (4 ժ. 28 ր.), Ղարաքիլիս—առաւօտեան 5 ժ. 49 ր. (6 ժ. 47 ր.), Ալէքսանդրոպոլ—9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), Կարս—1 ժ. 06 ր. (2 ժ. 04 ր.) ցերեկուայ։

Պոստատար գնացքը № 72/73 Կարսից—Թիֆլիս մեկնում է երեկոյեան 5 ժ. 01 ր.. 5 ժ. 59 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ 8 ժ. 10 ր. (9 ժ. 08.), Ղարաքիլիս—11 ժ. 47 ր. 12) ժ. 45 ր.), Սանահին—1 ժ. 35 ր. (2 ժ.. 33 ր.) Թիֆլիս—6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առաւօտեան.

Ապրանքակիր-մարդատար գնացքը № 74/75 Թիֆլիսից—Ղարաքիլիս մեկնում է առաւօտեան 11 ժ. 30 ր. (12 ժ. 28 ր.), հասնում է Սանահին 4. 23 ր. (5 ժ. 21 ր.), Ղարաքիլիս—6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.) երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար գնացքը № 76/77 Ալէքսանդրապոլից-Թիֆլիս 7 ժ. 20 ր. (8 ժ. 18 ր.) Ղարաքիլիսից—Թիֆլիս մեկնում է ցերեկուայ 10 ժ. 33 ր. (11 ժ. 31 ր.), հասնում է Սանահին . 0 ր(·3.1ր. . 18 ր.) Թիֆլիս 5 ժ. 15 ր(1 ժ(6 ժ12 ժ. 2երեկոյեան։ 58 ր.), Գորի—3 ժ. 43 ր. (4 ժ. 41 ր.), Թիֆլիս 6 ժ. 32 ր. (7 ժ. 30 ր.) առաւօտեան։

ՄՈՍԿՈՒԱ-ԹԻՖԼԻՍ

Ժամերը նշանակուած են Պետերբուրգի հաշուով, փակագծերում Բագուի հաշուով)

Մարդատար արագ գնացքը № 19 Բագուից—Թիֆլիս մեկնում է ուրբաթ օրերը առաւօտեան 6 ժ. (7 ժ. 18 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 7 ժ. 33 ր. (8 ժ. 31 ր.)։

ԲԱԳՈՒ—ԲԱԼԱՋԱՐԻ

Մարդատար արագ գնացքը Թիֆլիս—Մոսկուա № 19-bis Բագուից մեկնում է երեկոյեան 6 ժ. (6 ժ. 58 ր.) պոստատարը № 3 bis—առաւօտեան 4 ժ. 17 ր. (5 ժ. 15 ր.) մարդատար № 5—bis—գիշերուայ 11 ժ. (11 ժ. 58 ր.) մարդատարը № 9—bis—ցերեկուայ 12 ժ. 35 ր. (1 ժ. 33 ր.)

Մարդատար արագ գնացքը Մոսկուա—Թիֆլիս № 52—bis—հասնում է Բագու առաւօտեան 4 ժ. 20 ր. (6 ժ. 13 ր.) պոստատար № 4—bis—9 ժ. 54 ր. (11 ժ. 52 ր.) երեկոյեան, պոստատար № 6—bis առաւօտեան 6 ժ. 32 ր. (7 ժ. 30 ր.) մարդատար № 10—bis—ցերեկուայ 3 ժ. (3 ժ. 58 ր.)։

ԹԻՖԼԻՍ—ԲՈՐԺՈՄ

Մարդատար գնացքը № 7/8 Թիֆլիսից—Բորժոմ մեկնում է ցերեկուայ 1 ժ. 52 ր. (2 ժ. 50 ր.), հասնում է Գորի—4 ժ. 10 ր. (5 ժ. 08) ր.), Միխայլովօ—5 ժ. 39 ր. (6 ժ. 37 ր.. Բորժոմ—7 ժ. (7 ժ. 58 ր.) երեկոյեան.

Մարդատար գնացքը № 7/8 Բորժոմից—Թիֆլիս մեկնում է գիշերուայ 12 ժ. 50 ր. (1 ժ. 48 ր.), հասնում է Միխայլովօ—2 ժ. (2 ժ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ և ԺԱՄԱՑՈՅՑ ՎԱՃԱՌՈՂՆԵՐ

պահանջեցէք

ԻՕՍԻՖ ՌԵՅՆԻՆԻ

առևտրական տան 1903 թուի պատկերազարդ պրէյս-կուրանտները։

Варшава, Граничная, 14.

(М.) № 12362 16—11

„Գուտտենբերգ" Գրախանութում վաճառւում են հետևեալ հայ գործիչների պատ-կարտերը հատը 5 կ. Աբովեանի, Նազարեանի, Նալբանդեանի, Պատկանեանի, Րաֆֆիի, Տէրեանցի, Պարոնեանի, Ջանշեանի, Աղամեանի, Պէշիկթաշլեանի, Ստեփանէի, Ներսէս V կաթող., Վարժապետեանի, Գրիգոր Արծրունու, Կարա-Մուրզայի, Պալասանեանի, Իզմիրլեանի, Օրմանեանի, Աղայեանի, Պռօշեանի, Սունդուկեանի, Սպանդարեանի, յիշատակ Մխիթարի, արձան Գրիգոր Արծրունու, Ս. Ճահազիզի, Լէօյի, Ալիշանի, Այդինեանի և այլն։ Ցանկացողները կարող են ձեռք բերել գրախանութից վերև յիշուածների կաբինետ և վիզիտ-լուսանկարները կարին. գինն է 40 կոպ., վիզիտը 20 կ.։ Կան և մեծադիրները, որ արժեն 1 ր. 50 կ. և 3 րուբլի։ Ցանկացողները կարող են դիմել.—Книжный магазинъ «Гуттенбергъ» въ домѣ Лалаева рядомъ съ коммерческимъ банкомъ

(98) 2—1

ՄԱՄՈՒԼԻՑ Է ՑԱՆՑՆՈՒԱԾ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ՏՊՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ներկայ 1903 թուականին լոյս կտեսնեն ՉՈՐՍ ՀԱՏՈՐ,

Որոնց մէջ կմտնեն. Գործակատարի Յիշատակարանից, Խնամատար, Արսէն Դիմաքսեան, Արամբին, Եւգինէ, Վարդան Ահրումեան, Ունէ՞ր Իրաւունք, Օր. Լիզա, Խելագարը, Հալածուածը, Հրդէհ, Արտիստը, Նորերից մէկը, Թանկագին կապանք, Տասնուհինգ տարի անցած, Փաթմա եւ Ասատ, Հատուածներ Ընկերներ եւ Յիշողութիւններ Րաֆֆիի եւ Աղամեանի մասին։

Այս չորս հատորի գինն է Թիֆլիսում ստացողների համար . . . 4 ր. 50 կ.

Օտար քաղաքներում . . . 5 ր. 50 կ.


Ուսուցիչներն, ուսանողներն և ծառայողները կարող են վճարել մաս-մաս բաժանորդ գրուելիս 2 ր., մնացեալը 2 նուագում. Առաջին և երկրորդ հատորները ստանալուց յետոյ։

Մնացեալ հեղինակութիւնները լոյս կտեսնեն 1904 թ. ին առանձին 4 հատորներով, որոնց համար կբացուի առանձին բաժանորդագրութիւն։

Դիմել—Тифлисъ Центральная книжная торговля կամ Тифлисъ Ширванзаде.

(77) 10—7

„ԳՐԱՄՈՖՈՆ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ԳՐԱՄՈՖՈՆ"



Թիֆլիս, Դւորցովայա փողոց, տուն Արծրունու № 7։ Հասցէն հեռագրի համար Թիֆլիս Գրամոֆոնի ընկերութիւն. Հեռախօս № 69.

Մեծ ճաշակութեամբ բազմատեսակ ամենակատարելագործուած գրամոֆոններ։

Առաջին ճաշակութեամբ պլաստիներ յայտնի և երևելի երգիչների ռուս, հայ, վրացի, թիւրք, պարսիկ, լեհացի, ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի և այլն։

Պլաստինների ընտրութեան ժամանակ, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գործարանի «Հրեշտակը գրելիս» կնիքի վրայ, առանց այդ բանին պլաստինները անպայման կեղծ են։

Ընկերութեան պահեստին հետ կայ յատուկ գործարան, որտեղ, հարկ պահանջած դէպքում ուղղում են գրամոֆոնները։

Գրամոֆոնների կանոնաւոր բանելու մասին, երեք տարուայ համար երաշխաւորութեան թուղթ է տրւում։

Ապրանքը փաթաթելու և կապելու ծախքը մազազինի հաշուին է։

Ապարատների առաքումը մինչև բոլոր երկաթուղիների կայարանները (նոյնպէս և ամառուայ ամիսներին նաւահանգիստները) ընկերութիւնը իր հաշուով է անում։

Պոստով առաքման ծախքի կէսը «Գրամաֆոնի» ընկերութիւնը իր վրայ է առնում։

Կիրակի օրերը խանութը փակ է իսկ միւս օրերը առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը բաց։

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ

Մեծ բուով առնողներին ուղարկւում է ըստ պահանջման նոր Պրէյս-կուրանտներ։

(75) 30—8

ԷԼԷՕՊԱՏ ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ

պրովիզոր ԿԻՆՈՒՆԷՆԻ

Այս դեղի գործածութիւնը դադարեցնում է մազերի թափուիլը և ոչնչացնում գլխի թեփը, էլէօպատի 25 տարուայ անհագին պահանջը (սկսած 1877 թ.) համոզում է վստահութեամբ վերաբերուել այս դեղին։ Ծախւում է ամեն տեղ։

Петербургъ, Разъѣзжая, 13—въ главный складъ ЭЛЕОПАТЪ, провизора Кинунена

(М.) 24281 8—4

Доз. ценз. 1-го апрѣля 1903 г.

Տպարան ընկ. «Վերեիչև և Կամենմախեր» Типографія Т-ва Вереичевъ и Каменмахеръ» Михайловск. пр., № 81 Тел. № 852